

956.101
SAR
1919
k.1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿԻԼԿԻԱ» ԳՐԱՏԱՆ ՔԻՒ 1

ՆԻՒԹԵՐ ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՈՒՆԸ

ՏԵՂԵԿԱԳԻՒ ԶԱԿՈՒ ՊԱՊԻՅԵԱՆԵՐ

(ՍՏՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԷՏԻՐԵՐ)

Armenian script

Արգարու թիւնը կը բարձրագոյն ազգերը,
նէ մեղքն ու սճիւրը կը կտրճանեն շայն:
ՍՈՂՈՄԱՆ

Հայաստանի
ՍՈՒՆՆԱԿԱՆ ԱՍՏՐՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Կ. ՊՈՒԼԻՍ

«ԿԻԼԿԻԱ» ԳՐԱՏՈՒՆ

Քիւ 37, Գապրիսարան փողոց, Բերս

1919

Գին՝ 12½ դր., Բուսթի ծախսով 15 դր.

4

ՆԻԹԵՐ ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ



ՏԵՂԵԿԱԳԻՐ ՅԱԿՈՒ ՊԱՊԻԿԵԱՆԻ

(ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԷՏԻՐՆԵԻ)

Ֆրանսիա ՏՐ Փրէսանսի ի յստացարանով



Հայաստանի
ՅԱԿՈՒ ՍԱՐԳՅՈՍԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. «Կ.-ԱՐՁԱԳԱՆԳՅԻ»
1919



(Քիտ Չարդաբանի)

ՅԱԿՈՒ ՊԱՊԻԿԵԱՆ

(1856 - 1909)

Հա՛յր,
Իբրև կոթող յաւերժական,
այս Մատանը Քու անկեղ յի-
շատակիդ կը նուիրե զՔեզ
պաշտող յրդիդ՝

ՅԱԿՈՒ ԹՈՉՈՒՆԿԱՆ

ՅԱԿՈՐ ՊԱՊԻԿԵԱՆ



1909ի գարնան եր, երբ Մոնկոլեան սել քաքը կար-
միր եր ներկեր Կրիկիոյ ամբողջ դառսը եւ վերածեր
եր զայն համասարած գերեզմանի մը . Սիսուն եւ ձիհուն
հայ արիւնի հեղեղներ էին ընդուներ: Ու Երիսասարգ-
Քուրքերը, յայտնի թէ ծածուկ, դիւանենց ժպիտով, ձեռ-
ներնին շփեր էին՝ գերագոյն պարսֆ մը կասարած ըլլա-
լու բորենավայել յբուրթեամբ, քննելով այսպէս՝ Քաղա-
ղափակերութեան ալ, իրենց պաշտած Ալլանի՛ն ալ? Ե-
րեսին: Հին թէ նոր բուրբ մշայնութեան արդիւնն է ե-
ղեր այդ, որ չէ ուզած երբեք ըմբռնել թէ այս երկրին
երկկուան եւ վաղուան տերերն ալ կրնային իրաւունք
ունենալ ապրելու:

Կը հասնին սակայն սրափումի օրերը, պէտք էր մո-
խիր ցանել Մեծ Նդեռնին վրայ, դիաքաղը կասարել
խաչուած Արդարութեան: Օսմ. երեսի. Ժողովի բուրբ
մեծամասնութիւնը, սրտառուչ համերաւութեամբ մը
պաշտօն կուտար իր իսկ անդամակիցներէն «օսմանցիա-
ցած» Հայու մը՝ անոր բերելիք նպաստաւոր տեղեկա-
գրութեան մը կանխահոգ մտածումով: Այսպէս կ'ենթա-
դրէին գէթ Հայերն ալ, որ աղաղակ բարձեր էին այդ
ընտրութիւնը բեկանելու համար:

Եւ ահա՛ Պապիկեան Պոլսէն կը մեկնէր անտուկ՝
բախիժը կուրծքին մէջ: Կը հասնի աղէտն վայրը, կը
տեսնէ գործուած Ոճիրը. եւ, անոր դիմ աղաղակով ընդ-
վզումն է որ կը փրփրի իր մէջ: Ատոր ապագոյցն են

ՊԱՊԻԿԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Պիտի չի կրկնեմ այսօր այն խորհրդածութիւնները՝ որոնց մասին խիստ յաճախ գրած եմ, մասնաւոր ընկելով այնքան տեղի՝ որ պէտք էր դնել Հայկական Հարցը հաշտութեան¹ դաշնագրին մէջ։ Չիկայ ողորմեմք մարդ մը որ անգիտեցայ թէ անկիս անյեւազգի հրաբորբով խնդիր մըն է։ Եւրոպա պարզապէս վստակաւոր բան մը չրած պիտի ըլլար՝ կարճ ժամանակէն արիւնազի հաշտեցարդարութիւն մը պատրաստելով։

Ներքին գաւառներէ հասած շարժերը հեզգեւեզ կը դառնան աւելի վրդովիչ։ Յայտնապէս կ'երեւի որ Քիւրտերը մըւայրած են վերանորոգելու իրենց քառասունամեայ շահասկութիւնները։ Աշխատար ժողովրդի՝ Հայերու մեծամասնութիւնը կ'ապրի անսպասելի մէջ, մշտնջենական հարածին տակ։ Պոլսոյ մէջ թուրք իշխանութիւնները ո՛չ ժամանակը, ո՛չ ոյժը եւ ոչ քերտու հաստատ կ'աւելն ունին Քիւրտիստանի առաջակցեցնելու հարկայրեղում՝ հանրային կարգապահութեան եւ խաղաղութեան յարգանքը։

Այս իրողութիւնները պէտք է կրկնել, պէտք է անդադար յայտարարել որպէսզի անոնք ծանօթացունին հանրութեան կողմէ. որպէսզի անոնք անոր մեքին մէջ հրեղէն տառերով քանդակուին եւ անոր տակ անհրաժեշտ եզրակացութիւնները։ Եւրոպա գուր տեղ կ'անցընէ գործնական նիւթապաշտութեան եւ բարոյական թուրքեան մը երեւոյթը։ Անկիս պիտի չիկրեար ականատեղը ըլլալ դեպքերու կրկնութեան մը, — նոյն իսկ անեւապիտր ասիւնանով — Հայկական Հարածանկներուն, առանց ցնցուելու այն դիմումներու հարուստ-

¹ Այլընտրանք Փրէսանտ կ'ակնարկէ պաշտօնական պատերազմի հաշտութեան։

ձեռն՝ որոնց հետեւանիները անհաշուելի պիտի ըլլային: Եթէ
Կոզուի որ ներկայ առաջադրուած հայտութիւնը տես-
կան կեանք ունենայ, միակ անկրեպ միջոց կայ, այն է՝
Թորթիան վերածել իր ապական Կաշրուքեան, ասով քոյր
չի տար համար որ նախագրորէն յիշնայ ինր տագնապի
մը մեջ՝ որ պիտի վստիգեւր անոր անքողութիւնը, ինչի իսկ
իւր ապական ստացուածքները: Այնք իրաւունք ունի որա-
նայն այն նշանիս վստիգը՝ որ կը ծակուանայ Հայաստանի
էս հետեւաբար քոյր քաղաքակիրք աշխարհի վրայ: Եթէ
պիտի ըլլար ինր ապացոյցներու, բաւական է անհեռ անկեղծ
մարդոց ուշադրութիւնը հրաւիրել իրապէս ջախջախիչ փաս-
տաբանքի մը վրայ:

Կոզուի անկարկել օտ. երեսօտիան Յակոբ Պապիկ-
եանի տեղեկագրին՝ ի. Կասին 1909 Ապրիլի Աստուանի կոն-
րածներուն: Այս տեղեկագրին գոյութիւնը յայտնի էր, զիտեղ
որ ըստ էր թէ տարաբար Պապիկեանի դեպքերը ու-
տումնասիրած էր զիս առած ըլլալու էր իր եզրակացու-
թիւններէն մէկ փակին հանուային ուշադրութեան յանձնելու
իւր անխոհեմութեանը համար՝ իր կեանքը վրայ տուած էր:
Գաղտնի մնացած էր ինչի իսկ ընտիրը, մենչդեռ իր քուր
պաշտօնակցին՝ Եռտուփ Բեւեալ պէի տեղեկագիրը կ'անյայ-
տանար Չրադանի պարտի հրդեհին մեջ: Եւրօպ պահուն
տարգում էր գաղտնիք: Պապիկեանի տեղեկագրին սեւա-
գրութիւնը ձեռքը սնցած է Հայերուն՝ որ զայն տպագրել
տարով գաղտնիօրէն գրուած են, որիկ օրինակ մը ձեռքը ին-
կած է Թարնի քոյրակցին՝ որ անոր մասին վերջումն
հրատարակած է ընդարձակ մեջբերումներով: Եպատակ չու-
նիմ անկեղ հաստիտորներ հրամցնել. կը բաւէ որ ըստ թէ
այդ տեղեկագիրը կը շուտաւեհ կարգ մը աջադրու կետեր:
Աստուանի յարդերը անհնարեմ յափով ցոյց կուտան Կառա-
վարութեան ուղղակի պատասխանատուութիւնը: Այդ Կառա-
վարութիւնը իր շնորհը ընդունած էր Լիբիան էս Թերափ-

քրէն: Երեսասարդ-Թորֆերը, յեղափոխութեան հանդեպ
Հայերու սնուցած բարի քրտնադրութեան եւ սարած եռան-
դուն մեռնակցութեան հակառակ, այս ողբալի գործի ըն-
թացիկն՝ Հայ սարաքաղղ գեղին ի նպաստ գործելու եւ կա-
ռաւարութեան վրայ ծանրացող պաշտպանելու սարսական
պարսակակոտորութեան մեծ բացարձակ անկարողութիւն մը ցոյց
տուած են: Անկի վերջ անևիք անեկ ինչ ըրին՝ խեղդելու
համար գոհերու գոհգոհները եւ սպանութեան համար ան-
պատիւ մնալը յանցապարս պաշտակոտորութեան:

Եւսանօրհնակ իրողութիւններ դժեկ յոյս մը կը պնտեն
Հայկական Հարցին վրայ: Ապացուցուած է որ, Օսմ.
կառավարութիւնը, ըրայ այն Ապշիւշ Համիտի գործակալ-
ներուն՝ թէ յեղափոխութիւնը կեղծողներու ձեռք, ի վիճա-
կի չէ խնդիր մը միջնուն Հայերուն երաշխաւորելու անհնա-
րեանքն — կեանքի, ազատութեան եւ ինչքի — իրաւունք-
ներ՝ գոր անեկ ընկերութիւն կը ջանայ սպանութեան: Իր-
նաւարտութիւնը ուրեւնի պարզ է. այն որ Եւրոպա. Հայոց ի
նպաստ փոխանորդ կը կանգնի այս դաշնագրին մեջ՝ որ հոր
Թորֆիոյ դիրքը պիտի բնորոշէ՝ սեղծելով առանձնապատկ
պարձակներ. այսինքն — փորձաւորութիւնն է որ գայն կը
թեքողի — Եւրոպայի ընտրուած կառավարիչ մը, իրեկ
հակակոտորած եւ իր հաշտութեան զորս անխախտի:
Եւրոպա, կա՛մ պիտի է հրամարի եւ պարսակակոտորութեան
այս հակակոտորած ընտրուած պիտի պիտի հաշտակերպի զի-
տեղու ձեռնած Հայաստանը, մարդկային ազգի վրդովուած
խիղճը. կամ այն է որ պիտի ընդունի այս գոհները իրենց
դաշնակներուն ձեռքէն ազատ ոտար միջանորութեան մը
հիս՝ ազատ սուպարեկ մը տալ թողոր. ցանկութիւններուն
եւ հակակոտորութիւններուն՝ Ասիական Թորֆիոյի բաժան-
մանը:

Ա. խարիչի թողոր անարտարութիւնները եւ հնարաւտ-
ութիւնները այդ մասին բան մը պիտի չի կրնայի ընել:

Հայտնութեան ժողովի օրակարգին վերցնել Հայկական Հարցին խորագրին և ֆենուրինը, պիտի նշանակէր ճախողակներու աննկնի անուշիկ գործել: Արեւ է պատճառարանութեանք հրաժարի՝ Հայաստանի ընծայելու միակ ցրտփունք. որուն անպիտանութիւնը նմանօրինակ պարագայի մը մէջ փորձառութիւնն ասպնցուցած է Լիբանանի կամ Սաւանի տեսակ մը ընդդրացնուած ծրագրով, պիտի նշանակէր ո՛չ թէ ստեղծել իրաց միակ մը, որ անբողջ ժողովորդի մը շարժարակներուն զնով պիտի արժէր որ ըլլար, այլ շրջապէ՛լ՝ արեւնի եւ արցունքի յանձնակէ մը ետք՝ բախուածը Ասիայի եւ Եւրոպայի, այսինքն Բարանութեան եւ ինչ որ կը կոչեն՝ Քրիստոնէութեան միջեւ: Այս վերջին տարիներու ընթացքին մեկն հարկադրուեցանք արձանագրելու թագուարիս ողբալի սնանկութիւնները արեւմտեան պիտանագիտութեան. այս կարգի նոր սնանկութեան մը հետապասկերին մասին ո՛րքան ալ ինչ համոզուած ըլլանք, կը խոստովանիմ որ դժուար է ինձ՝ անոր կարեղութեանը վրայ հաւաստի ընծայել:

ՅՐԱՆՍԻՍ ՏՐ ՓՐԷՍԱՆՈՒ

Բախ, 25 Ապրիլ 1913



ՍՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԷՏԻՐՆԷԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆԻ

«Արդարութիւնը կը բարձրացնէ
սզգիւր. և մեղքն ու ոճիւրը կը
կործանեն զայն»:

ՍՈՂՈՄՈՆ

Թողած ըլլալով Պոլիսը 12 Մայիսին, մենք, Փա-
շիկ պէյ (Պետական Պորտուգոյ Նախագատ Ատեանի նա-
խագահ) և Յարութիւն էֆ. Մոստիչեան (Մանասթըրի
վիլայէթին Դատական Քննիչ)՝ պատուիրակներ Բ. Դրան.
Երեսփոխան Եււսուֆ Քէմալ պէյ և ես՝ պատգամա-
ւորներ Օամ. Պորտուգարանի, 16ին հասանք Ատանա,
այդ քաղաքին և իր շրջականերու մէջ տեղի ունեցած
արիւնալի պատահարներուն, — որոնք տրամեցուցած
են թղթ օսմանցիները — պատճառները և նկարագիրը
ճշտելու և ճշմարտութիւնը ճանչցնելու պաշտօնով:

Մեկնելու ատեն կը մտածէի որ այս ցաւալի եղե-
լութիւններու վերաբերեալ լուրերը շատ չափազան-
ցուած էին, և խիստ կը փափագէի որ այնպէս ըլլար,
վասնզի հին վարչութեան օրով, առանց ոչ մէկ պատ-
ճառի, հարիւր հազարաւոր անմեղ Հայերու արիւնը
դեռ չէր չորցած, և այս խեղճ զոհերու անմեղութիւնն
ալ վերջապէս երեւան ելած ըլլալով, մեր միւսլիման

ՍՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԷՏԻՐՆԷԻ ԵՐԵՍՓՈՒԱՆ ՅԱԿՈՐ ՊԱՊԻԿԵԱՆԻ

«Արդարութիւնը կը յարձուցնէ
ազգերը. եւ մեղքն ու ոճիրը կը
կործանեն զայն»:

ՍՈՂՈՄՈՆ

Թողած ըլլալով Պոլիսը 12 Մայիսին, մենք, Ֆա-
շիզ պէյ (Պետական Խորհրդոյ Նախագատ Ատեանի նա-
խագահ) և Յարութիւն էֆ. Մոստիչեան (Մանասթըրի
վիլայէթին Դատական Քննիչ)՝ պատուիրակներ Բ. Գրան.
Երեսփոխան Եւուսուֆ Քէմալ պէյ և ես՝ պատգամա-
ւորներ Օսմ. Խորհրդարանի, 16ին հասանք Ատանա,
այդ քաղաքին և իր շրջականերու մէջ տեղի ունեցած
արիւնալի պատահարներուն, — որոնք արամեցուցած
են բոլոր օսմանցիները — պատճառները և նկարագիրը
ճշտելու և ճշմարտութիւնը ճանչցնելու պաշտօնով:

Մեկնելու ատեն կը մտածէի որ այս ցաւալի եղե-
լութիւններու վերաբերեալ լուրերը շատ չափազան-
ցուած էին, և խիստ կը փափագէի չոր այնպէս ըլլալ,
վասնզի հին վարչութեան օրով, առանց ոչ մէկ պատ-
ճառի, հարիւր հազարաւոր անմեղ Հայերու արիւնք
դեռ չէր չորցած, և այս խեղճ զոհերու անմեղութիւնն
ալ վերջապէս երեւան ելած ըլլալով, մեր միւսլիման

հայրենակիցները — մէջն ըլլալով կրօնաւորները եւ հասարակ ժողովուրդը, — անոնց հողակոյտը այցելած էին, որպէս զի ասով Հայերուն վիշտը կարենան մխիթարել և մանաւանդ ջնջել ամօթալի մէկ էջը քաղաքակրթութեան պատմութեան :

Այսպէս, բնականաբար ոչ ոք կը փափագէր դարձեալ կրկնուած տեսնել, ի՞նչ չափով որ ըլլայ, նոր դէպքեր՝ որոնք անցեալ ողբերգութիւնները յիշեցնէին :

Սակայն, բարէ, ստիպուած եմ հրապարակաւ յայտարարելու որ իմ անձնական հաստատումներս զիս բուրովին յուսախար ըրին :

Թող ըսեն ի՞նչ որ կ'ուզեն : Ամէն ոք իր սեփական կարծիքը ունի : Ըստ իս, նմանօրինակ դէպքերու կրկնութիւնը անվրէպօրէն արգիլելու միակ միջոցն է՝ ճշմարտութիւնը ծանօթացնել այնպէս՝ ինչպէս որ է, անուանց ամենափոքր վերազահութեան : Եթէ, ընդհակառակը, ջանք տարուի այս դէպքերու մեծութիւնը նըւազեցնել, եթէ ուզուի պատասխանատուութեան բաւժին մը վերագրել զոհերուն, ատիկա՝ իմ կարծիքով պիտի նշանակէր՝ բաց ճամբայ մը ձգել միեւնոյն դէպքերու կրկնութեան :

Ահա՛ թէ ինչո՞ւ կ'ուզեմ յտակօրէն և անկեղծութեամբ ոչ ոքի դէմ ինայելով Ձեզ ծանօթացնել արդիւնքը իմ քննութիւններուս և հաստատումներուս :

Տասնընչորս տարեկանէս սկսեալ կեանքիս մեծ մասը անցուցած եմ քաղաքական խռովութիւններէ փութորկուած միջավայրերու մէջ : Պուլիարական ապստամբութեան միջոցին Սօֆիա կը գտնուէի . թուրքերուս պատերազմի ատեն Պոսնիա էի՝ կոտարեալ քաղաքային պատերազմի մէջ : Կ. Պոլսոյ և Բերք-Քիլիսէի ջարդերուն ականատես վկան եղած եմ : Սակայն երբէք չեմ տեսած և ոչ իսկ կրցած եմ երեւակայել սարսափներ՝

որոնք Ատանայիսին հետ բազղատուէին : Այս նահանգին ջարդերը շատ ու շատ գլած անցած են այն բոլորը՝ ինչ որ Համբուեան վարչութիւնը այս տեսակին մէջ կազմակերպած է և ինչ որ իր բնութեամբ պիտի մընայ յախտնական ամօթ մը Օսմ. Պատմութեան :

Համբուեան ջարդերու մեծ մասը, այսպէս ըսուած, ունէին անասկ մը կանոնաւոր կազմակերպութիւն. կը իննչուէր տղայոց, կիներուն, հիւանդներուն, և կողոպուտի, հրդեհումի և քանդումներու մասին անասկ մը սեղմում կը դնէին : Ատանայի մէջ ողջ ողջ այրած են հիւանդները և վիրաւորները : Գիւղերու և շրջակայի ագարակներուն, Միսիսի և Համիտիէի գաղաններուն՝ ինչպէս նաև Հասան Պէյլիի (Պաղչէի գաղա) մէջ, իբրև հարստութիւն և կալուած այլևս ոչինչ կը մնայ. կիներէն և հինգ վեց տարեկան տղաքներէն շատեր վիրաւորուած են. անոնք մինչև իսկ առարկայ եղած են ամենադժպի վարմունքներու : Թարսուսի մէջ լսեցի վաթսուներ անցուկ երկու խեղճ պառաւներու գանգաւանները, անոնք կ'ողբային որ չէր յարգուած նոյնինքն իսլամական օրէնքը՝ որ կեանքը կը ճանչնայ իբր Աստուծոյ պարգևը, և կիներու պատիւը՝ փատիշահինը, այն [աստիճան՝ որ մարգըլալուս համար սարսափ կը զգայի :

Մեր առջև բերին 8-12 տարեկան բռնաբարուած 4 աղջնակներ, զանոնք, ի ներկայութեան էսաա Բէ-ուֆ պէյի (կառավարիչ Մերսինի) և ուրիշ պաշտօնատարներու՝ տարինք իսլամ գայեակի մը մօտ : Տեղեկագիրը ըստ պատշաճի խմբագրուելով պահուած է տեղական իշխանութեանց մօտ : Եղերերգութեան բոլոր ընդարձակութեանը և բոլոր զաղբի բարբարոսութեանը մասին գաղափար մը կազմելու համար կը բաւէր տեսնել անթիւ վիրաւորեալները, մանաւանդ խեղճ

փոքրիկները՝ ապաստանած Mme. Doughty Wylieի (կին անգլ. հիւպատոսին) հաստատած հիւանդանոցին մէջ. այս ազնիւ կիներ, առաւօտէն մինչեւ իրիկուն, հիւանդապահուհիի մը պէս զանոնք կը խնամէր, ամէն գովեստէ վեր յարզանքով մը և արիւթիւնով մը :

Ճրտնասացի և գերման քոյրերն ալ անոնցմէ կը խնամէին անջատօրէն :

Գերման հիւանդանոցի քոյր մը դէպքերու պատմութիւնները ընելու ժամանակ, եկաւ վայրկեան մը՝ ուր անկարող եղաւ զայն շարունակել. յետոյ, իր յուզումը անցնելէ վերջ, մեղի բտաւ որ Արգարեան վարժարանին մէջ տեղաւորուած շարժելու անկարող 150 վիրաւորեալներ՝ չէնքին հրդեհումին ատեն ողջ ողջ այրուած էին : Ատիկա ամենէն կոկիծալի մանրամասնութիւններէն մէկն է :

Շատ մարդիկ ևս մահը գտած են բոցերուն մէջ :

Սակայն որովհետեւ անկարելի է ամէն ինչ գրել, պիտի գոհանամ թուելով տակաւին 17 անձերու պարագան, — որոնց երկուքը ամերիկեան միախոնար և մէկը՝ բողոքական հովիւ, — անգէն, անպաշտպան և ոչ մէկ բանէ դանդատող, զորս այրած են Օսմանիէի հայ եկեղեցիին մէջ՝ եկեղեցական պաշտամունքի ժամանակ :

Համբոտի վարչութեան օրով՝ կիներու և տղայոց կը խնայէին և չէին յարձակեր ուրիշ ազգութեանց քրիտոնեաներուն, նոյնիսկ՝ Հայ-կաթոլիկներուն և Հայ-բողոքականներուն : Մինչդեռ Ատանայի քրիստոնեաներուն միջեւ ոչ մէկ խտրութիւն գրած են : Սուրիացիները (Սուրիանի-Բատիմ) և Սուրիացի կաթոլիկները (Սուրիանի-Քատիմ), որ ըստ լեզուի և համաամանքի կայրէն ոչինչ ունին, — վասնզի արարերէն կը խօսին — ունեցած են, առաջինները՝ 400 զոհ և երկրորդները 65. Քաղաքացիները (Քիլտանի) ունեցած են 200. Իսկ

Յոյները՝ հարիւրեակ մը Ատանայի քաղաքին և նոյն-
քան ալ նահանգին մէջ : Գալով Բողոքական-Հայերուն՝
անոնք ունեցած են 655 անձ սպաննուած , և Հայ-Կա-
թոլիկները՝ 200 :

Ընդհանրապէս հաստատուած է որ ջարդերու վա-
ղորդայնին միայն յանձնարարուած է Յոյները հանգիստ
ձգել : Ո՛չ մէկ տեղ քրիստոնեայ տարր մը չէ յար-
գուած , ինչ որ ալ եղած ըլլայ :

Ատենագրութիւնով մը հաստատուած է որ , Էրզինի
(Ճէպէլի Պէրէքէթի սանճագին գլխաւոր քաղաք) մէջ
երբ բանտը պարպուեցաւ , բանտարկեալներուն մէջ
գանուող երկու Յոյներ սպաննուած են՝ նոյն իսկ տե-
ղական իշխանութեանց ներկայութեանը :

Բոլոր այս փաստերը լայնօրէն կ'ապացուցանեն որ ,
Ատանայի ջարդերը՝ միմիայն Հայերու հանդէպ սար-
քուած շարժումի մը նկարագիրը չունին , այլ շարժ-
ման մը քրիստոնեաներուն և ընդհանրապէս Սահմա-
նադրութեան դէմ :

Բաց աստի , նախկին ջարդերու ընթացքին , կողո-
պուտը , և մանաւանդ տուներու և ինչքերու աւերու-
մը , երբէք չեն ունեցած ա՛յնքան մոլեգնութիւն , և
ո՛չ իսկ տեղի ունեցած են այնքան լայն աստիճանի մը
վրայ՝ որքան հիմակուանը :

Մէկ բառով , բոլոր այս սարսափները կ'ապացու-
ցանեն թէ կատաղի խեղագարութեան մը ուրականը
անցած էր այս գաւառին վրայէն : Այս վայրագութեանց
արդիւնքը այն աստիճանի է որ , անով թաթախուած
հողին կը քանդուի և դատելու կարողութիւնը կը կոր-
սընցնէ :

Ա.

Ձոններու քիւր եւ ցիւքական վնասներու
կարեւորութիւնը

Ձոններու թիւի մասին հաստատած եմ որ կայ աս-
ուելի տարբերութիւն մը պաշտօնական թիւերուն և ու-
րիշներու կատարած հաշիւին միջև: Հայերը և օտար
թերթերու թղթակիցները համաձայն են ընդունելու
թիւ մը՝ որ կը յաճի 25 և 30 հազարի մէջ: Գալով կա-
ռավարութեան, նախ պաշտօնապէս ցոյց տուաւ իբր
1500 ոչ-խալամ և 1900 իալամ, իսկ այժմ՝ նոր քննու-
թիւններէ վերջ, անիկա կ'ընդունի 6000ի համագու-
մար թիւը:

Կառավարութեան թիւերը հիմնուած են քաղա-
քային իշխանութեան տոմարներուն և կարգ մը վայ-
րերու մուխթարներուն և կրօնականներու տուած
ցուցակներուն վրայ: Հարկ չի կայ ըսելու որ քաղաքա-
յին իշխանութեան տոմարները չեն կրնար ներկայանալ
իրրև հաւատ ընծայուելիք աղբիւրներ, և խիստ բա-
ցայայտ է որ Ասանայի իշխանութիւնները ամէն տե-
սակ միջոցներու զիմեցին՝ քրիստոնեայ զոներու իրա-
կան թիւը պահելու համար: Ատկէ գատ բազմաթիւ
վայրերու մէջ, նոյն ինքն քահանաները և մուխթար-
ները կը գտնուին սպաննուածներուն մէջ: Օրինակի
համար, Համիտիէի մէջ 7 հոգի յաջողած են պահուելու
տեղ մը գտնել, 8 հոգի ալ ապաստան վնասուած են M.
Sabatier կոչուած ֆրանսացիի մը գործարանին մէջ, և
բոլոր մնացեալը, — հաշուուած 2000 հոգի՝ օտար թղթ-
թակիցներէ, — ջարդուած են, մէջը բլալով քահա-
նան և մուխթարը:

Պէտք է նկատի ունենալ որ՝ այդ եղանակին գոր-
ծաւորներու ահազին թիւ մը եկած էր այս գաղային

մէջ, և որովհետեւ ասոնք չէին արձանադրուած, անկարելի է հաշուել անոնց ճշգրիտ թիւը:

Տայր երկինք որ հիւպատոսներու և թղթակիցներու հաշիւները չստիպողանցուած ըլլային:

Սակայն տրուած ըլլալով Ատանայի կարեւորութիւնը՝ շնտեսական տեսակէտով, տրուած ըլլալով նաև որ ջարդերը տեղի ունեցած են աշխատանքի և առուտուրի ամենէն եռուզեռ շրջանին, Անատոլուի դասազան նահանգներէն՝ և նոյն իսկ Մուսուլի նման այնքան հեռաւոր նահանգէ մը հասած գործաւորներու ընդհանուր թիւը 40 կամ 50 հազարէն նուազ պէտք չէր ըլլալ: Այս թիւին առնուազն կէսը կազմուած էր Հայերէ՝ որոնց մեծագոյն մասը ջարդուած է:

Զիհնի փաշա (դէպքերէն վերջ կարգուած վալի Ատանայի) տեսակցութեան մը միջոցին օր մը կ'ըսէր ինծի թէ՝ անկարելի էր ընդունիլ որ հայ դոհերու թիւը կարենար հասնիլ 15 հազարի, քանի որ պաշտօնական տոմարներու համաձայն, Ատանա քաղաքը 13 հազարէն աւելի Հայ չէր հաշուեր: Սակայն, Նորին Վսեմութիւնը, ինչպէս որ կ'երեւար, մտոցած էր որ, երբ իր գործունէութեան վրայ կը խօսէր, իբր յաջողութիւն կը նկատէր իրենց երկիրը ճամբած ըլլալը 10,000 հայ գործաւորներ՝ որոնք հասած էին ուրիշ վայրերէ և բանակած՝ կայարանին մօտ վրաններու տակ կամ բացօթեայ: Երբոր այս կէտը յիշեցուցի իրեն, Նորին Վսեմութիւնը ստիպուեցաւ լռել: Կրնամ որ այլ կերպ շարժիլ իր պարծած յաջողութիւնը առանց կասկածի տակ թողելու:

Ենթադրենք որ այս խեղճ մարդոց կէսը գտնուելով հոս հոն, քաղաքէն դուրս, առանց դէնքի, կրցած է կեանքը ապաստել, անշուշտ միւս կէտը կորսուած է առանց հետք մը ձգելու որևէ պաշտօնական տոմարի մէջ:

Մնաց որ, եւ քաղուած մը պիտի տամ Ներքին
Գործոց նախարարութեան ուղղուած հաւաքական տե-
ղեկագրէ մը՝ ստորագրուած Բ. Դրան պատուիրակ Ֆա-
յիգ պէյի եւ Մաստիչեան էֆ.ի, ինչպէս նաև Մէրսինի
կառավարիչ Էսաս Բէուֆ պէյի կողմէ.

«Սեանայի միլայեթին ցաւայի դեպքերու ընթացքին
սպասնուած անձերու թիւն է, քաղաքային իշխանու-
թեանց սոմարներու համաձայն՝ 5683 — մ.ջը հաշուե-
լով զինուորները եւ ոստիկան զինուորները — որոնց
«1487ր իսլամ եւ 4196ր ոչ-իսլամ: Սակայն որովհետեւ
«հաւանական է որ ըլլար առժամապէս այս տեղերը
«հաստատուած եւ շարձանագրուած անձերու մեծ թիւ մը,
«հաւասարապէս մեռան. եւ որովհետեւ այժմ կարելի չէ
«այս անհասներու թիւը հետեյ, կը կարծենք որ սպան-
«ւելածներու ընդհանուր թիւը պիտի ըլլայ, իսլամ եւ
«ոչ-իսլամ, մօտաւորապէս 15000 հոգի: Միեւնոյն ատեն
«պէտք չէ մոռնալ որ 30,000 անձեր, պատանի եւ «զայ-
«ւեր մնան առանց ապաստանի. եւ առանց ոչ մեկ
«նիւթական միջոցներու»:

Կը կրկնեմ, տայր Աստուած, որ այս պարոններն
ու խարուած ըլլային զոհերու թիւին վերաբերմամբ:
Բայց շատ կը վախնամ որ այսպէս եղած ըլլալ:

Երդարեւ, պէտք է երեւակայել որ Հաճընի մէջ
խակ, ուր ջարդ տեղի չունեցաւ, — թէև Հայերը հոն
15 օր պաշարուած մնացին —, ցարդ ճշգրիտ լուր
չէ տունուած 3000 Հայերու մասին՝ որոնք Աստանայի
Նահանգին մէջ կը գտնուէին: Հաճըն ըլլալով լեւոնայի
և անբերրի քաղաք մը, իր քնակիչները ստիպուած են
այլուր երթալ՝ օրապահիկ ճարելու համար:

Անհերքելի է որ ոչ-քնիկ զոհերու թիւը մեծ է.
բայց տունուաղն մէկ տարի պէտք է կարենալ հասկնա-
լու համար ճիշտ թիւը այն անձերուն՝ որոնց ճակատա-

գիրը անձանօթ կը մնայ, վասնզի այս թիւը իւրաքանչիւր վիլայէթի տուած պաշտօնական տեղեկութիւններու վրայ միայն կրնայ հիմնուիլ :

Ամէն պարագայի տակ պէտք է ընդունիլ որ Ատանայի և շրջակայից մէջ բնակող օտարահպատակ դաղթականութեանց երեւելիները կրնան հաշուել աւելի պարբիւնով, մանաւանդ օտար թղթակիցները՝ որոնք կրնային ամէն տեղեր ազատօրէն մուտք գործել իրենց հետախուզութեանց համար : Հետեւաբար, սպասելով որ ճիշտ թիւերը ստուգուին իւրաքանչիւր վիլայէթի մէջ, իմ կարծիքով, այժմուս զոհերու ամենէն հաւանական թիւն է օտարներու ցոյց տուածը՝ որ 20 հազարէն վար չէ :

Ինչ կը վերաբերի նիւթական կորուսաներուն, բաւական է ինձ ըսել որ Ատանայի նահանգը, կայսրութեան ամենէն բարգաւաճ և ամենէն հարուստերէն մին, այսօր միմիայն աւերակներու կոյտ մըն է՝ արբատեսիլ և լռին :

Զիհնի վաշալի համաձայն, Ատանա քաղաքին մէջ հրդեհուած և քանդուած շէնքերը, ըստ քանակութեան, կը ներկայացնեն ամբողջութեան մէկ հինգերորդը, և ըստ արժէքին՝ մէկ երրորդը :

Պատկանեալ վարչութեան տուիքերուն համաձայն, հրդեհուած կալուածներու համագումար արժէքը կը ներկայացնէ մօտաւորապէս 96,000 օսմ. ոսկի : Իմ կարծիքով, աջ կողմէն գէրոյի մը յաւելումովն լսկ այս գումարը անբաւական պիտի ըլլար, վասն զի Սուրբացի երեւելի մը, էլիաս Թիւրքմանի, տեսած է անէացումը իր անշարժ կալուածներուն՝ 20,000 ոսկի արժէքով, գումար մը որ հիմնուած է վերոյիշեալ վարչութեան պաշտօնական թիւերուն վրայ : Պաղչէի մէջ աւր ամէն կարելի խնայողութիւններով ուղուած է շի-

նել անակներ՝ ուր հաղիւ կարելի է պատասպարուիլ միջնուորտի խստութիւններէն, հաստատուած է որ իւրաքանչիւրին համար պէտք էր ծախսել նուազագոյն 25 ոսկի: Արդ, բացայայտ է որ յարաբերորէն ճիշտ թիւ մը ունենալու համար պէտք է ընդունիլ 50 ոսկիի նուազագոյն և 500 ոսկիի առաւելագոյն չափ մը՝ իւրաքանչիւր այրած շէնքի համար, ինչ որ ցոյց պիտի տար պաշտօնական գնահատումներու իսկական արժէքը:

Հաւասարապէս օգտակար է յիշել որ Առանայի մէջ ապահովագրական ընկերութեանց հատուցանելի վնասներու գումարը կը հասնի 750,000 ոսկիի: Աւելորդ փաստ մը ևս՝ պաշտօնական թիւերու արժէքը յոյց տուող է:

Հարկադրուած եմ եզրակացնել որ նիւթական կուրուստներու ընդհանուր գումարը, անչարժ և շաբժուն կալուածներով, 3 միլիոն օսմ. ոսկիէն խալիս պէտք չէ ըլլայ:

Բ.

Խռովութեանց պատճառները. — Ինչպէ՞ս սկսան եւ իրենց ընթացքը Գարունակեցին

Պոլսոյ մէջ Մարտ 31ի հակայեղափոխական շարժումը սկսելուն հետ միասին, միեւնոյն օրուան ցորեկէն վերջ, անմիջապէս որ հեռադիրը արձագանգը տուաւ այն դէպքերուն՝ որոնց մայրաքաղաքը թաաք հանդիսացած էր, Առանայի մէջ խռովութիւնները պայթեցան:

Յաջորդ օրը, չորեքշաբթի, այս խռովութիւնները կը փոխուէին ջարդերու՝ որոնք տեւեցին երեք օր և վերջացան Ապրիլ 3ին:

Յետոյ, Բումէլիէն եկած վաշտերուն հասած իրի-

կունն իսկ (Կիրակի, 12 Ապրիլ), անոնք կը վերսկսէին մինչև երեքշաբթի վերջ գանելով :

Այս անիմաստ մոլեղնութեան իմաստը բաւարար կերպով հասկնալու համար, անհրաժեշտ է քիչ քիչ յետ երթալ, երթալ նոյն իսկ մինչև Սահմանադրութեան վաղորդայնը :

Սահմանադրական վարչութեան վերահաստատումը դէշ կերպով կը պատշաճէր շահերուն այս երեւելիներուն՝ որոնց հին վարչութիւնը ապօրէն հեղինակութիւն մը կ'ապահովէր : Ուրեմն ինքնաբերաբար այդ երեւելիները կը սնուցանէին ամենամեծ մտխանք մը նոր վարչութեան դէմ, և, շատ բնականօրէն, բնդւլէմ Հաւերուն՝ որոնք պատրաստ էին իրենց արիւնք թափելու՝ այդ Սահմանադրութիւնը պահպանելու համար : Այսպէս, այդ մարդերը մտածեցին որ՝ նոր բէժիմին դէմ յաջողութեամբ յարձակելու համար նախ պէտք էր Հայերը բնաջնջել : Ամբոխին ազիտութենէն և միամտութենէն օգտուելով, ամէն կողմ Հայերու դէմ տարածայնեցին զրպարտութիւններ — զրպարտութիւններ որոնք ժողովուրդի ամենէն փափուկ զգացումները վիրաւորելու բնայն ունէին :

Աօրիս չէր ամէնը :

Մ'ըթ կ'ըսուէր թէ Հայերը կը զինուէին խլամները ջարդելու և անոնց կիները սուսուսեցնելու նսրաբաւով : մ'ըթ սուտ գրոյցներ կը հանէին՝ որոնց համեմատ Հայերը իրրեւ թէ մեղանշած ըլլան խլամական կրօնքին դէմ և անարգած՝ բարեպաշտական հաստատութիւնները :

Այսօր ստուգուած է որ խլամ բնակչութիւնը գըրգուելու ձգտող այս սուսուցը տարածուած էին ամբողջ Անատոլի մէջ : Հին վարչութեան օրով ջարդեր տեսած նահանգներու կարգ մը երեսփոխաններ մեղի կը

պատմեն թէ այն ատենուայ կարգախօսք կուզար մայրաքաղաքէն, պաշտօնական գեկոյցի ձեւով, ծանուցանելով հաւանական ժամանումը յիշափոխականներու, որոնք իրրև թէ կառավարութեան և իսլամական իրաւունքներու վրայ յարձակելու նպատակ ունէին՝ և կը յանձնարարէին իսլամ բնակչութիւնը տեղեակ պահել այս իրողութիւններուն:

Յամաքի ճամբով մեկնած ըլլալով՝ գիշեր մը Գոնիայի մէջ անցուցինք: Վիլայէթի թահրիբատ միւտիբին և սասիկան-գօրայ հրամանատարը կայարանը գնդ դիմուորած էին՝ վայիին անունով մեղի բարի եկ մաղթելու համար: Այս էֆէնախները խօսակցութեան ընթացքին մեղի տեղեկացուցին թէ միևնոյն օրը այդ քաղաքին մէջ որչ չափով շարժութիւն չաններ կը տեսնուէին, իսլամները շուկայ եկած էին՝ ցղլուխ զինւած, Հայերը ազատամնած էին իրենց տուները և կամ իսլամ բարեկամներու մօտ. բարերախտաբար շուտ գիացուած էր որ այս շարժումին պատճառը սուտ լուր մըն էր ու այսպէսով խռովութիւններէ խուսափած էին: Անմիջապէս վայիին մօտ գացինք այս գէպքին նկարագիրը հասկնալու համար:

Անա՛ թէ ի՛նչ էր ինդիրին էութիւնը:

Նախնիմաց օր Պօզ-Քրրի (Գոնիայի գաղա) գայմա գամէն հեռագիր մը հասած էր որ կը հաղորդէր շրջող գրուց մը՝ որուն համաձայն 500 Հայեր գաղային մէջ մտած՝ սկսած էին հրգեհել և աւերել գիւղերը, և թէ իսլամ բնակչութիւնը գերագրգուտելով, բէաիֆներու միտերանոցին մէջ գանուած գէնքերը աւարի տուած էր: Հեռագիրը կ'աւելցնէր թէ, գինուորական ուժի մը չգայութեան պատճառով, տեղական իշխանութիւնները իսլամ բնակչութիւնը կը զրկէին շրջակայ գիսաւոր գիրքերուն վրայ՝ մինչև որ հասնէին գայմա գամին պահանջած օգնութիւնները:

Այս հեռագրին հասնելուն վրայ, բէտիֆներու տեղական վաշտը զէնքի տակ կանչուած և հապճեպով զրկուած էր, հանգստեան կոչուած տարիքոտ սպայի մը հրամատարութեան տակ: Սակայն վերջ ի վերջոյ հասկցած էին այս 5000 հայերու առասպելին էութիւնը: Ընդիրը կը յանդէր յիսնակ մը գնչուներու վըրայ, որոնք հոնկէ կ'անցնէին, ինչպէս ամէն տարի սովորաբար: Ահաւաստիկ պատճառը բոլոր այս վիճուելիներուն . . . :

Պայմագաւոյն հեռագիրը տեղի տուած էր զօրակոչի մը և Գոնիայի իսլամներուն միջեւ դրդուութեան մը Հայերուն դէմ:

Բռնապետութեան ուրիշ կուսակիցներ, ինչպէս Հաճընի միւֆթին և իր զաւակները Ահմէտ, Ճէվաէթ և Իզզէթ էֆէնտիները, հարցաքննիչ-դատաւորի փոխանորդ Սապրի էֆէնտի և Գօզանի (Սիւ) նախադատ ատենի անգամ Հիւսէյին էֆէնտի՝ սանձարձակ կերպով դէմ յայտարարուած են Սահմանադրութեան և Հաւասարութեան դէմ, և բացայայտօրէն ժողովուրդը դըրդած են քեաֆիրները սպաննել և իրենց ինչքերուն տիրանալ: Այս դէպքը ապացուցուած է Ատանայի պատժական գատարանը դռնուած թողցիկ-կոչերով:

Հրապարակաւ միեւնոյն ուղղութեամբ պրոպականտ մը եղած է Պաղչէի նախորդ միւտիրին կողմէ:

Բացայայտ է որ այս արուեստական դրդուութիւնները հոս ու հոն տեղի տուած են հույկական ջարդերու սկզբնաւորութեանց: Օրինակ, Էշճար-Ուշաղբի մէջ սպաննուած են Հաճընցի երեք Հայեր. Քարսի բուած ուրիշ գիւղի մը մէջ ուրիշ երկու Հայեր սպաննուած են, յետոյ յօշոտուած և այրուած:

Այս ոճիրներու հեղինակները առանց այլեւայլի իրենց արարքը խոստովանած են իբր պատճառ ցոյց

աւելով վերոյիշեալ գրգռութիւնները : Հակառակ ատոր, ասանք, հիւանդութեան կեղծ պատրուակին ասկ — իբրականութեան մէջ անոնց փախուստը դիւրացնելու համար — Ատանայի հիւանդանոցը փոխադրուած են :

Վարուելու այս եղանակը քաջալերութիւն մըն էր քոյոր եղեւնագործներուն :

Ատանա քաղաքին մէջ, մշտապատեթեան կուսասակիյները ամէն յերիւրածոյ միջոյներու զիմեցին՝ իտամն'րու կարծիքը Հայերուն դէմ հանելու համար : Փողովուրդէն մէկ մասին կ'ըսէին թէ այգիներուն մէջ Հայ մը մեղապարտ յարարութիւններ ունեցած էր իտամ կիներու հետ. թէ այն հայ երիտասարդը, որ իտամ մը սպաննած և ուրիշ մը վիրաւորած էր իր պատիւը պաշտպանելուն համար, Հայ թաղին մէջ պահուած կը մնար. թէ Հայերը մեծ քանակութեամբ գէնք'եր գնած էին և կը պատրաստուէին յարձակիլ Իտամն'րու վրայ : Աւելի վար խուերու և շարագործութեանց ընդունակ տարրերու կ'ըսուէր թէ պէտք էր ջարդել քեաֆիրները՝ անոնց ինչքերուն տիրանալու համար. թէ Սահմանադրութիւնը, իսլամին օրէններուն հակառակ հռչակուած էր՝ ապահովելու համար քրիստոնեաներու՝ մասնաւորաբար Հայերու շահերը :

Ջարդերէն քանի մը օր առաջ, Իրիսալ թերթին խմբագրութեան կողմէ կազմակերպուած միթինկի մը մէջ, բոլոր իսլամ դասակարգերը — պաշտօնեայ, կրօնական, զինուոր և գործաւոր — կ'աշխատին գանգուածային յարձակման մը պատրաստուելու համար : Վալին կը հաւատաէ որ գէնքերու մթերանոցը կողոպտուեցաւ այս գերագրգռուած ամբոխին կողմէ : Սակայն տրուած ըլլալով որ մթերանոցը պահպանուած էր պահակութեամբի մը կողմէ, և թէ այս պահակները, ո՛վ որ ալ ըլլար, առանց զիմադրութեան մանկու պիտի չթողէ-

ին. թէ սպացուցուած չէ որ պահակներուն և ժողովուրդին միջև քախում մը տեղի ունեցած ըլլայ. թէ միեւնոյն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մէջ՝ ուր այս սրտաճառներով ջարդեր տեղի ունեցած են, կասկած չի թողուր որ զէնքերը բաշխուած են կառավարական հրամանով :

Սրկու հայ երեւելիներ սպաննուած են, միննոյնինքն վալիին աչքին տակ, միւսը այն տեսակ վայրի մը մէջ՝ ուր գացած էր վերջնոյս կողմէ իրեն վստահած պաշտօն մը կատարելու համար : Կառավարութիւնը, ոչ միտն սճրագործները չի ձերբակալեց՝ այլ անտնայմով անցած չի շահագրգռուեցաւ : Այս ընթացքը կը ձգտէր սճրագործները քաջաշերելու, զանոնք ամէն տեսակ զրգուտ թիւններու մղելու և հրահրելու անտնց յաւի բնագոյնները : Ժամը Տիտ բոլոր կառավարական պաշտօնեաները, երեւելիները, ինչպէս նաև խաժանը հաւաքուած էին՝ ամէնքը կրկնով փաթթաց : Ասոր վրայ Հայերը, որ առաւօտէն ի վեր իրենց գործերով զբաղած էին, ստիպուած են իրենց վաճառատունները գոցել և սպաստանիկ իրենց տաները : Ստիկա բացարձակապէս անհերքելի սպացոյց մըն էր թէ իրենք չէին կրնար ոչ մէկ յարձակողական միտում ունենալ :

Աստաօլուի ջարդերուն ժամանակ, մաքերը խաղաղ պնդելու պատրուակին տակ, կը ստիպէին Հայերը որպէսզի տուներէն դուրս ելլեն և խանութները վերարանան. իրականութեան մէջ նպատակին էր գրկել զանոնք ամէն ինքնապաշտպանական միջոցէ և խղամներու կողմէ անտնց բնաջնջումը գիւրացնել : Աստանայի վայն պիտած է միեւնոյն միջոցին : Այնպէս որ ջարդը և կողողուար մեթատիկ կ'երգով սկսուած է խաղիտողումովը Հայերուն, որոնք վալիին պնդումներուն տեղի տալով, կը դանուէին փողպններուն կամ իրենց վաճառ

աատուհներուն մէջ : Յետոյ ամբողջ յարձակած է Հայ թաղին վրայ՝ սպաննելու համար բոլոր անոնք որ տուն ապաստանած կամ հոնկէ բնաւ դուրս չէին ելած : Այն ատեն է միայն որ Հայերը գանուելով օրինաւոր ինքնապաշտպանութեան մը հարկին տակ, զինուած զիմազբութիւն մը ցոյց տուած են, ուրկէց պատահած են երկուստեք կորուստներ : Սակայն, որովհետեւ ո՛չ մէկ Հայ երբէք չէ յարձակած իսլամ թաղին վրայ, և որ բոլոր իսլամ սպաննուածները գանուած են Հայ թաղին կամ ասոր մտտակայ զիրքերու վրայ, բայցարձակօրէն անկարելի է պնդել որ Հայերու ձեռք առած միջոցը պաշտպանողական և թուրքերունը յատկապէս պատրաստուած յարձակողական չրլլայ :

Աստիութիւնները այսպէս իրենց ընթացքը շարունակելին մինչեւ 4 Ապրիլ :

Օսման էֆէնտի անունով իսլամի մը ընտանիքը կը բնակէր Հայոց թաղին մէջ : Այս ընտանիքը ոչ միայն ոչ ոք չի խորհեցաւ նեղել, այլ ընդհակառակը, ամէն վտանգէ սպանով տեղ մը դրին զայն : Նմանապէս Հաճընի և Չորքմարզուանի (Տէօթ.Նօլ) մէջ գրտնուող իսլամ ընտանիքներ, հեռի ամենափոքր մտահոգութեան մը ենթարկուելէ, Հայերու կողմէ ամէն կարգի հողածութեան առարկայ եղան :

Ահաւասիկ գարձեալ նիւթական և շօշափելի սպաւցոյց մը որ Հայերը՝ Իսլամներ կատարելու վատ մտազբութիւնը չեն ունեցած երբէք :

Կուսակալ ձէվատ օւէյ, Ներքին Գործոց Նախարարութեան ուղղուած տեղեկագրով մը կը պնդէ որ իրեն անկարելի եղած էր կարգը պահպանել զինուորական միակ ջոկատով մը ընդդէմ չարագործներու և մարդասպաններու՝ որոնք ոչ մէկ բանի կ'ուզէին ականջ դնել :

Սակայն Ապրիլ 4ին, Հայոց թաղը բնակող վերո-

յիշեալ Օսման էֆէնտի միջոցաւ Հայերը նամակ մը ուղղւեցին կառավարութեան, ուր կը կրկնէին այն հաւատարմութիւնը թէ իրենք երբէք գէշ զխտուճներ ունեցած չեն: Արդ, այս գրութենէն անմիջապէս վերջ տրուած կառավարական միակ հրաման մը բաւական եղաւ յարձակումը դադրեցնելու: Դարձեալ այս պարագան յայտնի փաստ մըն է որ՝ կոստանդուպոլիսէն իր կազմակերպուած եկեղեցական իշխանութեանց զիսակցութեանք եւ հրահանով:

Ապրիլ 12ին սկսուած ջարդը, ինչպէս Ապրիլ 1ինը, վերագրուած էին ծիծաղելի կերպով յարձարյուած արտասոց պատճառի մը, որպէսզի ատով պատասխանատուութիւնը ձգեն Հայերուն վրայ:

Ճշվատ պէյ, իր տեղեկագրին մէջ, կ'ուղէ հաւատալ և հաւատացնել որ Հայոց թաղէն զինուորական ջոկատներու վրայ կրակուած ըլլալով, վերջիններք յարձակած են այդ թաղին վրայ: Իսկ հրգեհուճներու և աւարառութիւններու վրայէն լռութեամբ կ'անցնի:

Սակայն քննութիւնը ցոյց տուաւ որ՝ ո՛չ թէ միայն նիւթապէս անկարելի էր Հայոց թաղէն կրակել զինուորական բանակատեղիին վրայ, այլ նաեւ այն տունը, ուրկէ կը պնդուէր թէ հրացան պարպուած է, իսլամէ մը բնակուած էր: Խնդիրը կը կայանար ուրեմն կարգ մը իսլամներու խառնակչութեան վրայ, այդպէսով զինուորները Հայոց դէմ գրգռելու համար:

Յարգելի երեսփոխանները անշուշտ կը յիշեն որ Մարտ 31ի շարժման ժամանակ, յետադիմական մը — թերեւս Շէյխ Վահտէթի — երեսփոխանական ժողովէն հրացան պարպեց Այա-Սոփիայի հրապարակը բանակած զինուորներու վրայ՝ որոնք փոխադարձեցին:

Այս միջոցը, — որուն նպատակն էր երեսփոխաններու կոտորածը շառաջացնել — ինչպէս կը տեսնուի:

ճիշտ ու ճիշտ այն միջոցն է որ գործադրուեցաւ Ասա-
նայի մէջ : Երկու շարժումներու նմանութիւնը աչքա-
ռու է :

Յարգելի ընկերս Եռսուֆ Քէմալ պէյ կը գրէ .
«... Թէպէտ հրացան նետուած վայրերու մտաւայանե-
րը կարգ մը հայոց տուններ կային...» : Ասով կարծեա
բոլորովին չի մերժեր այն կարեկիտ թիւնը թէ՛ հրացա-
նաձուլութիւնը հայերու կողմէ կատարուած ըլլար :
Սակայն , իմ հասկացողութեամբս , այս մասին ամենա-
փոքր կասկած մը ներկի չէ , նկատելով որ իրենց սե-
փական թողէն դուրս բնակող բոլոր հայերը Սպրիլ Գին
սպանուած էին , այնպէս որ ՆՁին — թուական երկրորդ
կոտորածին — ադէ շրջանակներու մէջ ոչ մէկ հայ մը
նացած էր : Ուստի , զինուորներու վրայ կատարուած
հրացանաձուլութիւնը խլամի մը կողմէ միայն կրնաք
տեղի ունենալ :

Անկարելի է բաւական ուժգին բացատրութիւններ
գտնել՝ նկարագրելու համար սարսափը և վայրագու-
թիւնը այս երկրորդ կոտորածին՝ որ տեսած է երկու օր :

Այս սպանդի միջոցին էր որ ողջ ողջ այրած են
հիւանդները և այն վիրաւորները՝ որոնք հասած էին
շրջակայ ազարակներէն և գիւղերէն և կամ կը զբա-
նըէին զայրոցական շէնքին մէջ :

Ճէվաա պէյ իր անդեկագրին մէջ աւելորդ համա-
բուծ է խօսիլ այն սարսափելի մահացումին մասին՝ ու-
րուն այդ դժբաղդները ենթարկուեցան բոցերուն մէջ .
բաւ մը չըսեր փորերնին պատուած յղի կիներու , խող-
խողուած մանուկներու և ուրիշ հազար տեսակի անա-
նուն վայրագութիւններուն վրայով : Բայց չէ մոռցած
իննամով նօթագրելու որ Հայոց թաղին հրդեհումին
միջոցին մեծ քանակութեամբ ումերեր և ուժանակներ
պայթած են : Այս գրպարտութեան լաւագոյն հերքումը

կուտայ այն պարագան որ, Հայերը, իրենց ինքնապաշտպանութեան միջոցին, սուսմբեր կամ ուժանակներ չեն գործածած: Իրենց պաշտպանութիւնը կատարած են հասարակ զէնքերով, այնպէս որ բացայայտ է որ եթէ տէր եղած ըլլային նմանօրինակ միջոցներու՝ կըրնային զանոնք դիւրութեամբ գործածել և անոնց արդիւնքը կարելի էր շատ դիւրութեամբ ճանչնալ: Նըմանօրինակ պայթուցիկներու ամենափոքր մէկ հետքին անգամ չենք պատահած, որպէսզի կարողանայինք անոնց գործածութիւնը ենթադրել, ուստի և շատ բընական է թէ ատիկա յայտնի չարախօսութիւն մըն է՝ օրուն նպատակն է Հայերու վրայ ձգել դէպքերու պատասխանատուութիւնը:

Գալով այն թնդանօթ կոչուածներուն, որոնք իրբեւ թէ խռովութեանց միջոցին Ատանայի շրջակայքը գտնուած են, ատոնք երկու հատ ջուրի խողովակներ էին՝ փայտով շրջապատուած և վառօդով լնցուած: Նաճար օլլու դիւզին Հայերը զայն պատրաստած էին գործածելու համար՝ չունենալով ուրիշ պաշտպանութեան միջոցներ. ու ատիկա անգամ մը ևս կուգայ արագուցանելու որ այդ կողմերու Հայերը ապստամբութեան գաղափարներ սնուցանելէ շատ հեռի էին:

Բոլոր այս մանրամասնութիւնները վճռականօրէն կ'ապացուցանեն իրողութիւն մը. այսինքն այն թէ՛ Ատանայի մէջ կառավարական պաշտօնեաները և անոնց արբանեակները կանխահոգ կարգադրութեամբ պատրաստած են այնպիսի պարագաներ, որ իրենց մտածումով իրենց վրայ ինկած պատասխանատուութիւնը պիտի կարենային նուազեցնել այն ջարդերուն մէջ՝ զոր իրենք իսկ ծրարելոյն և սրտեցին, գէթ պաշտօնապէս, այդ պատասխանատուութիւնը նետել Հայերուն վրայ: Այս նպատակին հասնելու և Իսլամներու վայրագ մո-

լեզնութիւնը արդարացնելու համար, դիմեցին ամէն
տեսակ սուտերու և զինուորներու բանակատեղիին
վրայ կրակելու զազրելի միջոցին :

Ճէվատ պէյ կ'աւելցնէ թէ Հայերը բազմաթիւ
զէնքեր գնած են և թէ մէկ քանի ամուսն մի-
ջոցին Ստանա ներմուծուած են 12,000 կտոր հրացան-
ներ :

Ճիշտ է որ Հայերը զէնքեր գնած են : Սակայն նե-
րածուած բոլոր մթերքը Հայերու կողմէ չէ գնուած :
Ընդհակառակը, — ինչպէս արդէն ամէն տեղ — այո
զէնքերուն մեծագոյն մասը առնուած է Իսլամներու
կողմէ :

Հոս հարցում մը կը ցղուի :

Հայերը իրաւունք ունին զէնքեր գնելու :

Իմ կարծիքով, այս խնդիրը գլխաւոր կարեւորու-
թիւն մը ունի Ստանայի զէպքերուն լուծման հա-
մար, և կ'արժէ որ ատոր պատասխաննք ամէն բանէ
առաջ :

Կը կարծեմ թէ անկարելի է Հայերուն զլանալ բո-
լոր օսմանցիներուն հասարակաց ելող իրաւունք մը :
Եւ Հայերը նոյն իսկ ամէն ժամանակ — և մինչեւ ցարգ
— նշաւակ եղած ըլլալով ամէն տեսակ յարձակումնե-
րու, կեղեքումներու և կոտորածներու, կայսրութեան
միւս տարրերէն աւելի իրենց օրինաւոր ինքնապաշտ-
պանութեանը համար զինուելու հարկին տակ կը զրու-
նուին : Կառավարութիւնը Հայերը այն պարագային
միայն պէտք էր արգելել, երբ առանց բացառութեան
բոլոր օսմանցիներու զէնք կրելու արտօնութիւնը վեր-
ցնէր և զանոնք կասարեղապիս զինարայի ընկեր : Բայց
մերժել այս իրաւունքը ցեղի մը՝ որ զէնքին կը դիմէ
մի միայն ինքնապաշտպանութեան համար, մինչդեռ
զայն կ'արտօնեն յարձակող տարրերու — ինչ որ են

նաև ներկայ բոսիւն — պարզապէս պիտի նշանակէք
Իսլամներու կողմէ ոչխարներու պէս ընաջնջման դա-
տապարտել զանոնք : Ոչ մէկ օսմանցի պիտի ընդունէք
այդ կորզի անարդարութիւն մը :

Հետեւարար երբ Հայերուն, ուրիշ տարրերու օրի-
նակին վրայ, զինուած ըլլալը նկատուի խռովութեան
կամ ապստամբութեան նշան մը, կարելի չէ ընել այդ
տառնց արդարութիւնը և ողջ մտութիւնը բռնաբարելու :
Եւ հարկադրուած ենք ընդունելու որ, Ատանայի դէպ-
քերը այնպէս էին որ Հայերը չէին կրնար չի հպատա-
կիլ՝ իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեան հրա-
մայական պահանջին :

Անկասկած պիտի գայ օր մը՝ ուր սահմանադրա-
կան կառավարութիւնը յարգել պիտի տայ իր իշխա-
նութիւնը հանդէպ թալանիչներուն և սճրագործներուն
և պիտի զինաթափ ընէ բոլոր Օսմանցիները : Այն ատեն
ոչ ոք հարկ պիտի տեսնէ մտածելու ինքնապաշտպա-
նութեան վրայ : Սակայն համոզուած եմ որ, մինչեւ
այդ երջանիկ օրուան ժամանումը, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ
մէկ խիղճ պիտի կրնար մեղադրել Հայերը՝ իրենց օրի-
նաւոր ինքնապաշտպանութեանը համար :

Այս չէ բոլորը :

Ամբողջ աշխարհ համաձայն է որ բացարձակ միա-
պետութեան մը վերադարձի վտանգները դեռ կատա-
րելապէս հեռացուած չեն : Հետեւարար, ամէն օսման-
ցի, պարտաւոր է արթուն մնալ նման հաւանականու-
թեան մը հանդէպ, և հակառակ պարագային, Սահմա-
նադրութիւնը պաշտպանել զէնքով :

Ընդհանուրին ծանօթ է որ երկու հայ կուսակցու-
թիւնները, Դաշնակցութիւն և Հնչակ, հաւասար իրրիկաբ
և թեւագրի, իրենց բոլոր ջանքերը կեդրոնացուցած են
այս նուիրական պարտքին կատարման :

Մարտ 31ի պատահարներու ատեն Պոլսոյ մէջ Հայերը պատրաստ էին իրենց կեանքին գինովը պաշտպանելու Սահմանադրութիւնը : Ատանայի , ինչպէս ամբողջ կայսրութեան մէջ , Հայերու ընթացքը միեւնոյնը եղած է : Ինչպէս — առ ի չգոյէ տպացոյցի — կարելի չէ եղած գտնել փաստ մը՝ որ կարենար ենթադրել տալ թէ Հայերը կը սնուցանէին հայրենասիրական զգացումներու հակառակ դադարի մը , այսինքն անջատողականութիւն . բան մը որ , մանաւանդ հրապարակաւ զնուած զէնքեր՝ չէին կրնար վերագրուիլ յետին նպատակներու : Եթէ Հայերը Օսմ. Հայրենիքին հանդէպ գէշ գիտումներ սնուցած ըլլային , անոնք , Պոլսոյ գէպքերու ընթացքին , չպիտի նուիրուէին այնքան կատարեալ անձնուրացութեամբ և վեհանձնութեամբ՝ Սահմանադրութեան պաշտպանութեան և կարգի պահպանութեան համար , հակառակ այն մոլեգին վիշտին՝ զոր Ատանայի գէպքերը արթնցուցած էին անոնց սրբոյն մէջ :

Կը կարծեմ թէ ամէն անկողնակալ Օսմանցի դայրոյթ պէտք է զգայ Հայերու ցոյց տուած ուղիղ և օրինաւոր վարմունքին ի վնաս՝ անոնց հանդէպ նետուած դարչելի զրպարտութիւններէն :

Օսմանիէ , Համիտիէ , Թարսուս , Չորք-Մարզուան , Հաճըն և այլուր , գէպքերը պատահած են — համեմատութիւնները պահելով — միեւնոյն եղանակաւ : Յերիւրածոյ սուտերը և Հայերու վերագրուած արուեստական խռովութիւնները և յարձակմանց կեղծ իրարանցումները՝ միևնոյն վաճառանիշը կրող ասպրանքներ էին :

Օրինակի համար , Սասֆ պէյ , Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչը , Սպրիլ Չին հեռագրած է կուսակալութեան և Օսմանիէի դայմագամութեան թէ՛ անհիմն է Չորք-

Մարզուանի Հայերուն վերագրուած յարձակումը, և թէ ընդհակառակը, այս վերջինները օգնութիւն կը խընդրէին: Միեւնոյն օրը կուսակալութեան կը հեռագրէ նաև որ Թաճիրլիի աշիրէթը — որ Օսմանիէի մէջ աւերուցներու սկսած էր — յարձակած էր Չորք-Մարզուանի վրայ: Օսմանիէէն, Համիտիյէէն, շրջակայ ուրիշ գիւղերէ ստացուած հեռագիրներ կը ծանուցանէին թէ ամէն տեղ՝ Ասանայէն խմբովին հասնող բնիկ կամ եկեւոր Իսլամներն էին որ սճիրներ կը գործէին և հանրային կարգը կը խանգարէին:

Հակառակ ասոր, միևնոյն Ասաֆ պիյը, Ապրիլ 3ին կը հետապրե ներքին Գործոց նախարարութեան թե՛ Հասան-Պեյիի և Չեյրուհի փեսայիները հաւաքուած են ասանայը քարոսակն ընկշու հաւնար և շատ հաւանարս պիտի զան միևնոյն Ա.սանա: Ապրիլ 4ին, հեռագրաւ հրահանգ կ'ուղէ նախարարութիւնէն և կուսակալութիւնէն՝ Փափագ-Քալէի 400 բանտարկեալները ազատ արձակելու, անոնցմով կազմելու համար վաշտ մը և զանոնք զինել հրացաններով և ռազմանութեանով՝ զորս կը պահանջէ Իսկէնտէրունէն: Իր ծրագիրը կը գործադրէ. կ'արձակէ բանտարկեալները, կը զինէ և զանոնք կը մղէ Հայերուն դէմ:

Ինչպէս բացատրել շարժելու այս եղանակը և ինչո՞վ որակել զայն:

Ասաֆ պէյ կ'ուղէ հաւատացնել որ Համիտիէի կոտորածը սկսած է՝ այդ քաղաքին քահանային կողմէ Արսլան պէյի վրայ պարպուած ատրճանակի հարուածէ մը: Սակայն ապացուցուած է որ յիշեալ քահանան հողի մը գնման համար վճարած էր 40 ոսկի և կառավարատուն դացած էր՝ իր գնած հողին պաշտօնական մուրհակները ստանալու համար: Ուստի, ողջմտութեան հակառակ է ընդունիլ որ մի միայնակ կառավարատուն

եկած անձ մը կարենար մարդասպանութիւն մը գործել, և յայտնապէս երեւան կուգայ որ ցոյց տրուած փաստը ամենապարզ սուտ մըն է :

Մնաց որ, Յրանաայի մը, M. Sabatier և Ապոլուէ Սալիք անունով պարկեշտ միւսլիման մը, վկայած են որ քահանան Իսլամներուն կողմէ սպաննուեցաւ՝ առանց ոչ մէկ սրտճառի :

Ի՞նչ կարծիքով, Ատանայի դէպքերուն նկարագիրը բաւական չափով կը յայտնուի այն ուրախութիւններէն՝ որոնցմով Հայերու և ընդհանրապէս քրիստոնէայ տարրին դէմ տարուած յաղթանակը ածուեցաւ : Ապրիլ 12ին, մինչդեռ մէկ կողմէն քանի մը ոստիկան-զինուորներ՝ Ջարդերէն վերապրած խեղճ Հայերու խումբ մը քաղաքէն դուրս կը վանէին, ուրիշ ոստիկան-զինուորներ վիլայէթին բոլոր բարձր պաշտօնատարներուն ներկայութեանը. «Կեցցէ՛ Սուլթան Համիտ, անկցի՛ ազատութիւնը» աղաղակներով Սահմանադրութեան վազորդայնին քաղաքին հրապարակին վրայ կանգնուած յաղթական կարևոր կը ֆանդիին :

Այս միջադէպը շատ յատկանշական է :

Գ.

Կառավարութեան ընթացքը դեպքերէն առաջ ևս վերջը

Վերև յիշատակուած իրողութիւնները ներկայացնելու վերջ, ինծի աւելորդ կը թուի զբաղիլ կուսակալ ձեւատ պէյի և Ատանայի պաշտօնատարներուն՝ ինչպէս նաև ձեպէլը-Պէրէքէթի կառավարիչին ընթացքին վրայ : Ի՞նչ կարծիքով, իրենց ընթացքը ազատցած է, օրէնքով ճշտուած բոլոր պայմաններուն մէջ, որ անոնք բացարձակապէս յանցապարտ են իրենց

խառնակչութիւնով, կազմակերպչութիւնով եւ աշխատակ-
ցութիւնով: Սակայն ինչ որ ամէնէն սարսափելին է այս
գարհուրելի դէպքերուն մէջ, իմ կարծիքով, վարուե-
լու այն եղանակն է՝ որուն Հայերը ենթարկուեցան
կոտորածներէն ետք, ինչպէս նաև այն դժոխային մի-
ջոյնները՝ զորս գործադրեցին վերապրողները բնաջըն-
ջելու համար:

Զարդերէն վերջ Ատանայի մէջ դրեթէ Հայեր մը-
նացած չէին: Մէկ մասը սպաննուած էր, միւսը յաջո-
գած էր փախչիլ, մնացորդը ոչխարի հօտի մը նման
գրուած էր քանի մը սատիկան-զինուորներու հսկո-
ղութեան տակ: Երբ քննութիւնը սկսաւ, մէկ կողմէ
կը տեսնուէր մարդկային խեղճուկ բեկորներ՝ սիրելի-
ներու ժարմիններուն վրայ թափուած արցունքներէն
սպառած, միւս կողմէ՝ բոլոր գրգռիչները, տճիրներու
կազմակերպիչները, թալանիչները և մարդասպանները:
Այս պայմաններուն տակ ի՞նչ բրած է տեղական կա-
ռավարութիւնը: Անիկա բանտարկեց վերապրողնե-
րուն մէջ աչիլ ընկնող բոլոր անձերը և զանոնք շՂ-
թայի գարկաւ՝ կառավարութեան դէմ ապստամբած և
զինուորներուն վրայ զէնք պարպած ըլլալու ամբաս-
տանութեամբ:

Այս տարօրինակ ընթացքը արդիւնքը ունե-
ցաւ չզխոցողներուն ալ սովբեցնելու որ՝ կոտորածնե-
րու հեղինակը և կազմակերպիչը նոյնինքն տեղական
կառավարութիւնն էր:

Երբէք չէ ուրացուած որ Հայերը զէնք գործածած
են: Ոչ ոք ուզած է նոյնպէս ուրանալ որ զինուոր-
ներ և ուրիշ խլամներ սպաննուած են Հայերու նե-
տած գնատակներէն: Բայց խնդիր է գլխաւր թէ՛ նման
պարագաներու տակ զէնքի գործածութիւնը կարելի է
պատմել: Անա այն խնդիրը՝ զոր մինչև այսօր լուծե-

լու մասին պատերազմական ատեանը, բոլորովին անփոյթ կը գանուի :

Ինչպէս արդէն ըսինք, Հայերը ապաստանած ըլլալով իրենց թաղը՝ իրենց տուներուն մէջ, իսլամ ամբոխը և զինուորները նոյն տեղը անոնց վրայ յարձակած են . այնպէս որ Հայերը միմիայն զբաղած են իրենց պաշտպանութիւնով : Այս մասին ոչ մէկ կասկած գոյութիւն ունի : Այն տուներուն ճակատները, ուր Հայերը դիմադրեցին, թէ՛ զինուորներու և թէ՛ պաշտպօղութներու կողմէ՛ արձակուած գնդակներէն ծակծրկուած են :

Ո՛ր օրէնքը կամ խիղճը պիտի կարենար թոյլ տալ պատժելու անձ մը՝ որ սպաննած է նախայարձակ մէկը՝ նմանօրինակ պայմաններու մէջ :

Օրինաւոր ինքնապաշտպանութիւնը՝ ո՛չ միայն օրկեմով ընդունուած է՝ այլ նաև քնակալ օրկեմ մըն է՝ հաստատուած մարդկային խիղճով : Չկայ մարդ մը, նոյնիսկ անասուն մը, որ չը գրայ ինկզբի պաշտպանելու քնածին պէտքը :

Ի՞նչ պատճառաբանութիւն կարելի էր մեզ քերել ընդունելու համար որ Հայ տարրը գուրկ ըլլայ այս իրաւունքին :

Տեղական կառավարութիւնը, իր ոճիրը թագցնելու նպատակով, պատերազմական ատեանի կազմութենէն առաջ իսկ պատրաստեց սուտ վկաներ և ամբաստանողներ : Օգտուելով ջարդէ պրծած Հայերու վերադարձէն և այդ տարաբախտներու ազատ կերպով արտայայտուելու անհամարձակութենէն, ամէն ճիգ թափած է այս զարհուրելի դէպքերու մեծութիւնը ծածկելու և անոնց բնոյթը եղծելու համար : Բոլոր այն Հայերը, որոնք օրինաւոր ինքնապաշտպանութեամբ իրենց գէնքին դիմած էին, քննութիւն կատարելու կամ վկայութիւններ առնուելու կեղծ պատրուակին տակ՝ ոճիրով ամբաստանուեցան :

Յիշեալ կառավարութիւնը իր գործունէութեան չափանիշը ցոյց տուաւ, պատերազմական ատեանին առջեւ զրկելով անմեղներու այս խումբը՝ զանոնք դատապարտել տալու նպատակով:

Դ.

Պատերազմական Ատեանը

Պատերազմական Ատեանը կազմող սպաներու պատուարութիւնը և պարկեշտութիւնը վիրաւորող ոչինչ պիտի ըսեմ: Սակայն, պէտք է յայտարարեմ որ անոնք չունէին բաւարար չափով օրինական և քննչական ծանօթութեանց զարգացումը: Չեմ կրնար նմանապէս իմ զարմանքս ծածկել այն իրողութեան որ միամտութիւնն ունեցան իբր դատական հիմ ընդունելու՝ անզայի բարձր պաշտօնեաներուն և ժողովուրդի զանազան խաւերուն կողմէ պատրաստուած դատախազներու բերած սխալ վկայութիւնները՝ մէկ կամ ամբողջ, մեծ ու պզտիկ բոլոր գործերուն մէջ, այնքան խոր կերպով ընդելուզուած էին:

Ատանայի պատերազմական ատեանի վճիռները արուած ըլլալով այս հիմերուն վրայ, բնականօրէն զուրկ են դատաստանական և օրինական արժէքէ:

Վեց Հայեր յիշեալ ատեանին կողմէ դատապարտուած են մահուան՝ Օհան Օզլու խան կոչուած խանի մը մէջ յիմեակ մը խղամներ սպանած ըլլալու յանցանքով: Սակայն զարմանալի է որ նկատի չէ տանուած թէ, 1. Խողրոյ առարկայ սպաննուած խղամները այդ խանին մէջ բնակողներ չէին, 2. Թէ անոնք կասկածելի մարդիկ էին, քաղաքին զանազան թաղերէն հա-

սամ՝ Հայոց թաղին կից այս իւանին մէջ, ուր քնելիք բան մը չունէին, ինչ որ կ'ապացուցանէ թէ հոն հաւաքուած էին Հայերուն վրայ յարձակելու նպատակով. 3. Թէ իրենց մահը կը զուգադիպի ճիշտ Հայերուն դէմ եղած յարձակումին միջոցին:

Այն իրողութիւնը որ հանդիստ թողուած են հեղինակները այն անանուն ոճիրներուն՝ որոնց Ատանու ե իր շրջակաները թատր հանդիսացած են և որոնք ազգային ազէտքի մը համեմատութիւնները առած են, այն իրողութիւնը՝ որով ինայուած է այս յելուզակներուն, և ասոր փոխարէն դատապարտուած են Հայ դժբախտ վերապրողներ, որոնց միակ յանցանքը օրինաւոր ինքնապաշտպանութեամբ մահուընէ խուսափելը եղած է, չեմ կրնար ինքզինքս արգիլել տեսնելէ կրկին տապաքութիւն մը՝ վերստին աչքէ անցուած և ճոխացած— Պոլսոյ համիտական կոտորածներուն:

Պատերազմական Ատեանի այդ էֆէնտիները բոլորովին կ'անդիսանան որ՝ ոճիրներու վերարեբեալ խնդիրներու մէջ դատաւորները սպիպուած չեն իրր պարզ ճշմարտութիւն ընդունիլ վկաներու բոլոր ըսածները, և թէ ընդհակառակը, անոնք օրէնքով պարտաւոր են ճշտելու թէ այդ տրուած վկայութիւնները կը յարմարին նիւթական կարելիութիւններու հետ, և հետեւաբար, ընդունելի՛ կամ ոչ:

Գննչական պայմաններու անբաւականութեան պատճառովն է որ պատերազմական ատեանը կը շարունակէ դատապարտել այնպիսի անձեր, որ շուկայէն փախչելով սպասանուած են օտարանպատակներու տուներ, ուրկէ, նոնքակ օտարանպատակ երեւելիներու հաւաստումներուն համաձայն, խուճութեանց բովանդակ տեսողութեանը միջոցին դուրս չէին ելած:

Պարտաւոր ենք հաւաստարարէս մտածել որ՝ պատե-

քաղմական ստեանը նմանապէս տեղեակ չէ Սահմանադրութեան պատմութեան և օսմանեան տարրերութեան քաղաքական կեանքին. վասնզի անիկա Դաւնակցութեան կուսակցութենէն զատ Դրօշակ կոչուած յեղափոխական ինքնակոչ կուսակցութեան մը վրայ ալ կը խօսի, և յայտնի կերպով կատարելապէս կ'անգիտանայ որ Դաւնակցական կուսակցութիւնը նոյնքան կանոնաւոր և յարգելի կուսակցութիւն մըն է՝ որքան Իշխիմաւ և Թէրաքքըն: Ատեանին մահավճիւճերը տրուած են այն միւսնոյն նախապաշարունակներով՝ որոնց Հայ կուսակցութիւնները նշաւակ եղած էին հին վարչութեան օրով, և այսպէս անիկա կը կործանէ՝ Օսմանեան Սահմանադրութեամբ հաստատուած իրերու կարգը և քաղաքական և ընկերային կեանքը:

Այս ամէնը կրնա՞յ մեր արժանիքը և մեր ազգային պատիւը բարձրացնել յաշտ քաղաքակիրթ աշխարհի:



Վ Ե Ր Ջ Ա Ր Ա Ն

Այս սարսափի ճշմարտութիւնները ճանչցնելու համար որոշուած տալէ առաջ՝ շատ տատանեցայ ու երկարօրէն մտածեցի: Քաղափարն ունեցայ նոյն իսկ զանոնք թեթեւեցնելու՝ որպէս զի չի վշտացնեմ իմ Իսլամ ընկերակիցներս:

Սակայն ապգի մը անդամներէն կամ կրօնքի մը յարողներէն միայն կողմէ դործուած ոճիրներու պատասխանատուութիւնը՝ չի կրնար հաւաքաքար կշռել այդ ազգին կամ կրօնքին վրայ:

Իսլամական օրէնքը, հեռի ընդունելէ այդ կարգի վայրագութիւններ, ամենափոքր անարդարութիւն մը չի թոյլատրեր: Անիկա կը հրամայէ ամէն բանի մէջ ճշմարտութիւնը որոնել: Այս այսպէս ըլլալով, հարկ չի տեսայ ծածկելու այն իրողութիւնները՝ զորս ես հաստատած եմ և որոնց համոզումը ունիմ:

Չեմ կարծեր որ այդ ճշմարտութիւններու մերկացումը կարենայ տարբերու միջեւ անհամբարաշխութիւնը աւելցնել: Վասն զի ես յոյս ունիմ որ այս վայրենի խելագարութիւնը չպիտի երկար տևէ:

Հին վարչութեան օրով սովորութիւն էր ոճիրները պահել, ուրանալ, փաստերը խեղաթիւրել:

Այդ վնասակար դրութեան չնորհիւ, այն հիւանդութիւնը, որմէ երկիրը կը տատապէր իբր շարուաւից վէրքէ մը, կայսրութեան կողմն փակչած փատխտի մը ձեւն առած էր:

Այդ, հիւանդութիւն մը կը բուժուի այն ատեն միայն՝ երբ կ'ախտաճանաչուի և կը դարմանուի :

Պահելով զանիկա՝ կարելի է բուժումը ձեռք բերել :


Գոնէ այդպէս է իմ կարծիքս :

Վերջացնելէ առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու որ, Իրքիմաս եւ Թերաֆը կուսակցութեան անդամները, Ատանայի վայրագ եղերերդութեան կազմակերպման և գործադրութեան մասնակցած են : Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոնարներէ և լատին քահանաներէ :


Բայ աստի, օտար թերթերը արձագանգը եղած են այս սարսափներուն, և հասարակաց կարծիքը գրեթէ համոզուած է որ՝ անոնք գործն են Իրքիմաս եւ Թերաֆըին :

Այն պարագային, որ կուսակցութեան մասն կազկող ոճրագարտ անհատներ չարաքառելին իր ծոցէն և իրենց արժանի պտտիժը չի կրեն, Իրքիմաս եւ Թերաֆըի վրայ ծանրացող մեղքերը անհերքելի պիտի մնային :

Ներկայ ժամուս, ուր կառավարութիւնը, եթէ կարելի է այսպէս ըսել, բոլորովին մեր կուսակցութեան ձեռքը կը գանուի, կրնանք զսհերուն անմիջակին օգնութիւն մը հասցնել, առանց բացառութեան յանցաւորները պատժել Օրէնքին բոլոր խստութիւնովը, և նման աղէտներու կրկնութիւնը արդիւրդ անվրէժ միջոցներ ձեռք առնել, ու այսպէս կուսակցութեան և կառավարութեան վարկը վերահաստատել և Հայրենիքը փրկել :



Յ Ա Ի Ե Լ Ո Ր Ա Յ



Իրենց նոյնիսակ շահեկան պարունակութեանը համար, ստորև կը դնենք Պապիկանի այն փանի մը հեռագիրները՝ որոնք իր կողմէ ի պաշտօնէ ֆաշուած են Ա.սահայէն: Առեկցենք որ ստեղծել, բոլոր այս վաւերաբանութեանը ստորագրող Ս. Սուրենի կողմէ շուսակարումը եւ որիցներու կողմէ փրանսերէնի քարգլանուելով դրկում է զանազան հայանկարս խմբակցութեանց կառն անհասներու, ստեղծ կարգին նաև Pro Armeniaի, որիկ քարգլանած ենք ներկայ գործին ամբողջութեանը:

Ե. Ս.

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

31 Մայիս 1325 (1909) հեռագրին

Երէկ մեկնեցանք Օսմանիէէն, և Հարունիէ գիւղէն անցնելով՝ ուշ առնն հասանք Պաղչէ: Այս գիւղին բնակչութիւնը յափշտակուած գոյքերու փնտռութեն և վերադարձումէն զրգուած, Հայերուն դարձեալ կը սպառնայ: Իսլամները — չգիտեմ թէ ի՞նչպէս — տեղեկացած են Չորք-Մարգուանի վերջին միջադէպին, և այս առթիւ կը սպառնն թէ այդ վայրը ունրակոծուած է: «Չորք-Մարգուանի եկեղեցին կործանած է, կ'ըսեն Հայերուն, ու մենք պիտի կտորենք ձեռնէ բոլոր ողջ մնացողները: Հոս դանուող 25 զինուորները պիտի չի կրնան զձեզ պաշտպանել: Իսլամ կիները այս զինուորներուն ձեռքերը կապելու բաւական են»:

Կտորածներէն խուսափած քանի մը Հայեր, այս սպառնալից շարախօսութիւններէն զարհուրած, Պաղչէ

եկան՝ զինուորներուն հրամայող տասնապետի մը ընկերակցութեամբ: Անոնց հասնելէն ետք Պաղչէի մէջ հրկիզեցին դեռ կանգուն մնացող չորս տուներէն մին:

Հակառակ այս ամէն սարսափներուն, որուն վկան եղանք մեր անցքին վրայ ամէն տեղ, տեսանք Պաղչէի միւֆթին — Չորք-Մարզուանի մէջ հսկողութեան տակ աւնուած — որ իր ընկերներուն հետ ազատօրէն կը շրջէր:

Մեր քննութենէն կատարելագոյն համոզուեցանք որ Բամազանի Պայրամէն առաջ իսլամներու և քրիստոնեաներու միջև յարաբերութիւնները լաւ էին: Այդ թուականին է որ Չարդի շուկները շրջան ընկլու սկըսան: Այս խնդրոյն մասին բողոք բարձուած է ձէպէլի-Պէրէքէթի կառավարիչին մօտ, ու այդ պատճառով նոյն իսկ դատական քննութիւն մը բացուած է:

Բացի այս տարածուած զրոյցէն՝ որուն համաձայն Պաղչէի միւֆթին իր քարոզներուն մէջ յայտարարած է թէ Սահմանադրութիւնը Հայերու գործն էր. թէ Սահմանադրական վարչութիւնը Իսլամներուն վնասակար էր և թէ անոր հաստատած հաւատարութիւնը՝ Շէրիաթին հակառակ, այս միեւնոյն միւֆթին օր առաջ տեղեակ էր այն գէպերուն՝ որոնք չորեքշաբթի առտու պիտի ծաղէին Առանայի մէջ, ու միեւնոյն օրուան իրիկունը Համիտիէի մէջ գիշերանց մարդ զրկած էր Հարունիէ՝ Հաճի Հալիլ պէյի և Հասան աղայի ետեւէն, անոնց հետ կազմակերպելու համար այն Չարդը և կողողուար՝ որոնց ուրբաթ սկսան:

Գարձեալ այս միեւնոյն միւֆթին է որ Պաղչէի մէջ 30 ոսկի կաշառք գրպանած է Գերմաններէ՝ տեղւոյն մէջ ասոնց վարձած տունը պաշտպանելու համար:

Հակառակ անոր որ այս փաստերը ո՛չ մէկ հերքում կը վերցնեն, վերին աստիճանի զարմացած եմ

տեաներով որ այս միւֆթին և իր արբանեակները ազատօրէն կը շրջին :

Այս իրողութիւնը, ինչպէս նաև միւֆթին Պաղչէ մուտքը իր որդւոյն հետ, ուր, իրր նշան ուրախութեան, ողջունուեցան հրացանաձգութեամբ խլամ բռնակշուժենէն — որ սպառնալիքի ասկ Հայերը ստիպած էր ի նպատակ միւֆթին հեռագիր քաշել և դռնօղակութեան դիր մը ստորագրել — նոր քաջալերանք մը պիտի գտնէ իր սփրներուն մէջ : Ընդհակառակը, վերոգրեալ գէպքերը Հայերուն համար պիտի ըլլան նոյնքան յուսահատութեան պատճառներ :

Ճշմարիտ Օսմանցիի իմ զգացումներս զիս կը մըղեն եզրակացնելու որ՝ այդ կարգի գէպքեր անկարելի կ'ընծայեն տարրերու միջեւ բարեկամական յարաբերութիւնները ո՛չ միայն այս տեղերուն՝ այլ և ամբողջ Կայսրութեան մէջ :

Գործելու այնպիսի ուղղութիւն մը ընդունած են, որուն ողբալի հետեւանքները հեռագրի մը մէջ խրատացնել կարելի չէ : Բայց և այնպէս կուգամ յանուն Հայերիքին խնդրել որ այդ բանէն հրաժարին :

ՀԵՌՍԻԻ ՌԻՂՂՈՂՄԵՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Բաշուած 25 Մայիս 1325 (1902) քուսկանիս

Մեր Յանձնաժողովը ծանօթացաւ այն հեռագրին՞ զոր Ատանայի կրօնական պետերը Ձեր վսեմութեան ուղղած էին :

Իմ կարծիքով ջասոնք կատարելապէս իրաւունք ունին :

Արդէն դժուար չէր նախատեսել թէ պատերազմական ատեանը այս արդիւնքին պիտի յանդէր : Ահա

Թէ ինչո՛ւ պարտք համարած էի վճիռներու գործադրու-
թեան յետաձգումը խնդրել : Այս խորհուրդը դժբաղ-
գարար նկատողութեան չէ առնուած : Նոյնպէս Թարսու-
սէն քաջած էի հեռագիր մը , ստորագրուած նաև Էսաա
Քէուֆ պէյի կողմէ , խնդրելու համար որ անարգարօ-
րէն բանտարկուած Հայերու — ինչպէս Քերովրէ էֆէն-
տիլի — քննութիւնը կարենար շարունակուել՝ առանց
յիշեալները բանախն մէջ վար դրուելու :

Ձեր վսեմութիւնը հրամայած է ընթացք տալ այս
խնդրանքին , սակայն այդ հրամանը չէ գործադրուած .
վասնզի մինչդեռ պատերազմական ստեանի պարտքն
էր Պաղտատի Զատէի , Պօշնաք Սալիհի , Իհսան Յիք-
րիի և Ստանայի քանոնց գործակիցներուն և Պաղչէի
Սայիտ աղայի , հաճի Խալիլի և Հասան աղայի , ինչպէս
նաև Օսմանիէի և Իհսանիէի միեւնոյն դատակարգի
Չարգարարներուն քննութիւնները փութայնել և ան-
յապող վճիռները գործադրել , և , անգամ մը կարգը
վերահաստատելէ վերջ , պատժական կամ քաղաքա-
յին ուրիշ յանցանքներու քննութիւնը թողուլ սովո-
րական դատարաններու : Պատերազմական Ատեանը ,
փոխանակ այսպէս վարուելու — ինչ որ իրեն համար
պարտականութիւն մըն էր — երկու ամսուայ իր գու-
մարումներու ընթացքին նկրտեցաւ Հայկական ասլըս-
տամբութիւն մը երեւան հանելու : Իր բոլոր գործու-
նէութիւնը յատկացուց պատժելու խեղճ վերապրող-
ներ — որոնց միակ ոճիրը այն էր որ իրենց կեանքը
պաշտպանած էին — , իր սրոշումներուն մէջ հիմնուելով
միմիայն քաղաքային և զինուորական պաշտօնեանե-
րու յայտարարութեանց և վկայութեանց , ինչպէս նա-
և Պաղտատի Զատէի նման ոճրագործներու , բոլորը հե-
զինակ և կազմակերպիչ խռովութեանց :

Վստահելի աղբիւրէ մը տեղեկացած եմ որ , Հա-

ճընի շրջանակին մէջ, մեծ թիւով Հայեր 7—8 հոգի-
նոց խումբերով շղթայի զարնուած՝ ամենագէշ վար-
մունքներու զոհուած են :

Երէկ ուշ ժամանակ հոս հասայ և տեղեկացայ թէ,
հակառակ Ձերդ վսեմութեան հրամանին, Գերովրէ է-
ֆէնտին և իր դասակարգին սրահանող Հայերը ա՛լ ա-
ւելի մեծ խառութիւններու առարկայ են, և թէ Հա-
յերէն մաս մը դաղթելու սկսած է :

Նախորդ կուսակալ Ճէվսապէյ, թերթերու մէջ
հրատարակուած իր տեղեկագրով կը հաւաստէ թէ՝
կոտորածը սկսած է զրոյցի մը հետեւանքով — որուն
ստութիւնը այլապէս ծանօթ է Ճավիտ պէյի — որուն
համաձայն իբր թէ կին մը և քսնի մը խալամներ Հա-
յերու կողմէ սպաննուած են այդիներուն մէջ :⁷

Սակայն դատարանական թղթերով և վաւերական
տեղեկութիւններով վճռականօրէն հաստատուած է թէ՝
Չարդերու շշուկները Բամազան Պայրամիէն իվեր շըր-
ջան կ'ընէին : Ընկերակիցներս ալ այս կէտը հաստա-
տած են իրենց հեռագիրներուն մէջ :

Ըստ իս, միմիայն Ճէպէլը-Պէրէքէթի ասնճագին
մէջ, կոտորուած Հայերու թիւը նուազագոյն 3000ը
կ'անցնի : Բացի Չորք-Մարզուանէն, ուր Հայերը օրի-
նաւոր դիմագրութիւն մը ըրած են, բոլոր գաւառին
մէջ հայապատկան միակ շէնք իսկ կանգուն չի մնար :

Հետեւաբար եթէ պատերազմական ատեանը՝ աղէ-
տէն փրկուած Հայերը նեղելէ չարդիլուի, ներկային և
ապագային համար բացած պիտի ըլլանք անբուժելի
վէրքեր :

Պատիւ ունիմ վերջին անգամ ասիկա Ձերդ վսե-
մութեան յայտարարելու :

ՀՆՈՒՄՆԻՐ ՈՒՂՂՈՒՄԻՆ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՊԱՏԵՐԱՉՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌՆԵՐՈՒ

ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՂԵՐՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թուական 7 Յունիս 1325 (1909)

Կը խնդրուի Ձեր վսեմութենէն որ բարեհաճի յեռանդել պատերազմական ատեանի վճիռներուն դորձադրութիւնը՝ մինչեւ որ մեր քննութիւնը աւարտի։

ՅԱԿՈՒՐ

ԶՈՂԵՐՈՒ ԹԻԻԸ

Ատանայի և իր շրջանակներուն մէջ սպաննուած Հայերու թիւը մտաւորապէս 21,000 հոգիի կը հասնի։

Այս թիւը կը բաժնուի հետեւեալ կերպով.

Ատանա և շրջակայ ազարակներու մէջ	9780	
Թանիր-Վէրաի	1280	
Սայ-Կէչիա	850	
Էսէ Հաճիլի	1558	
Օսմանիէ	1111	
Պոստան-Չիֆթլիք	1277	
Գուրտլար	3623	
		<hr/>
		19,479
Յոյներ		
Սուրիացիներ (Սիւրիանի)	250	
Քաղղէացիներ (Քիլտանի)	850	
	422	1522

Համագումար

21,001

Թէպէտև Հայ, Հայ-Կաթողիկ, Բողոքական, Յոյն, Սուրիացի և Քաղղէացի Առաջնորդարաններու մուած թիւերը 21,000ի դումարը կ'անցնին, սակայն մեր քննութիւնը հաստատակց այս վերջին թիւը։

Անկախաբար այս գոհերէն, զանազան իսլամ ազարակներու մէջ սպաննուած են ուրիշ անձեր՝ որոնց թիւը յայտնի չէ։

“ ԿԻԼԻԿԻԱ, ԳՐԱՏՈՒՆԸ ”

Ունի ամէն տեսակ գիրքեր և հանգէսներ՝ մատչելի գիներով: Կը գնէ հին ու նոր գիրքեր, թերթեր և ձեռագիրներ: Կը ստանանք ամէն կարգի տպագրական և հրատարակչական գործեր: Կը բաժանորդագրէ Օրաթերթերու և Պարբերականներու: Պատասխան ունի Հայկ. Պատուիրակութեան առանձին և խմբովին քաշուած լուսանկարները՝ մեծադիր և փոքրադիր, և զանազան տեսակի քօքարթներ: Ունի նաեւ մասնաւոր սպասարկութիւն՝ լրագրական ազգերու համար:

Ապարիկ Գարձաւնուրիւն յի կայ

ՀԱՍՏԵ՛ Գապրիորան փողոց,

Ամերիկեան Դեսպանատան դէմ թիւ 37

Քերա, Կ, Պոլիս

Librairie LA CILICIE

No. 37, rue Cabristan, en face de l'Ambassade des Etats-Unis

Pera-Constantinople

Հ Ո Յ Ս Տ Ս Ս Ի

ԱՆՆՈՅՈՒՆԻ ԳԵՄԻՆԸ

ԳՐԻԳՈՐ ԶՕՂՐԱՊ

Գործ ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆԻ

(Բազմաթիւ պատկերներով եւ վաւերապատկերով)

Ինչ մէկ օտ. ունի

Մեծ-քանակի համար 20% զեղչ

Ինչեւ շեղիմակիւն:

Հայաստան, Իւնիսի խան, թիւ 54,

կամ «ԿԻԼԻԿԻԱ» Գրատունը

ATÜ Merkez Kütüphanesi



* 0 0 3 8 0 8 6 *

956.101/SAR